ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N << ԵՔ-ԳՀԽԾՁԲ-20/41>>

ք. Երևան 04 օգոստոսի 2020թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և և «Իրտիգ» ՍՊԸ-ն ի դեմս Ընկերության տնօրեն Տ. Պողոսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Երևան քաղաքի թվով 7 վարչական շրջանների բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.5 Եթե պայմանագրի 2.4.4 կետով սահմանված ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Կատարողը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **4039800 (Չորս միլիոն երեսունինը հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ 673300 (Վեց հարյուր յոթանասուներեք հազար երեք հարյուր) ՀՀ դրամ ԱԱՀ-ն:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի **3 (երեք) տոկոսի** չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի **0.19 (զրո ամբողջ տասնինը տասնորդական)** տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի **0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական)** տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված

հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է **11** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Երևանի քաղաքապետարան	«Իրտիգ» ՍՊԸ
ք. Երևան, Արգիշտի փող. 1	ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Թումանյան 11/26
Կենտրոնական գանձապետարան	«Ինեկոբանկ» ՓԲԸ, Վանաձոր մ/ճ
	Հ/Հ 205142207229-1001
ՀՎՀՀ 02593108	ՀՎՀՀ 06954405
Է. Կիրակոսյան _____	Տ. Պողոսյան _____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
04 օգոստոսի 2020թ.կնքված N ԵՔ-ԳՀԽԾՁԲ-20/41
ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման հասցեն	մատուցման ժամկետը**
1	71351540/551	***Ծառայության մատուցման ընդհանուր պահանջների*** 1. Տեխնիկական հսկողությունը պետք է իրականացվի պատվիրատուի կողմից տրամադրվող նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա և պետք է ապահովի վերանորոգման աշխատանքների իրականացումը անհրաժեշտ որակով և ինժեներական նախագծերին, տեխնիկական առանձնահատկություններին և այլ պայմանագրային փաստաթղթերին համապատասխան: 2. Տեխնիկական հսկողության ծառայությունները պետք է իրականացվեն ՀՀ Քաղաքաշինության նախարարի 28.04.1998թ.-ի N44 հրամանով հաստատված շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգով և Պատվիրատուի կողմից տրամադրվող պարտականությունների շրջանակներում: 3. Տեխնիկական հսկողություն իրականացնողի հիմնական պարտականություններն են՝ • շինարարության սկզբից մինչև ավարտը ընկած ժամանակահատվածում պարբերաբար լուսանկարահանել շինարարության օբյեկտի վիճակը, • ապահովել կատարվող աշխատանքների համապատասխանությունը կապալի պայմանագրի պայմաններին, շինարարական նորմերին և կանոններին, • Կապալառուի կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման շեղում հայտնաբերելուց անհապաղ տեղեկացնել Պատվիրատուին՝ կցելով համապատասխան հիմնավորումը, • ստուգել և հաստատել աշխատանքային և կատարողական փաստաթղթերը՝ նախապատրաստված Կապալառուի կողմից, • ստուգել և վերահսկել նյութերի որակը և շինարարական աշխատանքների ընթացքը, որպեսզի ապահովվի մասնագրերին և պայմանագրային մյուս փաստաթղթերին համապատասխանությունը: Արգելել կամ փոփոխել այն նյութերը, որոնք չեն համապատասխանում անհրաժեշտ պայմաններին, • վերահսկել և գնահատել շինաշխատանքների գործընթացը, որպեսզի ապահովվի շինաշխատանքների	դրամ	435000	1	Ք. Երևան, Ավան վ/շ, Խուդյակով փ. 70, Խուդյակով փ. 68/1, Բաբաջանյան փ. 3 , Ավան-Առինջ թաղ. 1 մկշ. 4/2, Թումանյան թաղ. 8, Չարենց. 14, Դ.Վարուժան թաղ. 7, Դ.Վարուժան թաղ. 5, Նարեկացի թաղ. 40, Ավան-Առինջ թաղ.1-ին մկշ 3/5, Թումանյան թաղ. 11, Դուրյան թաղ. 56, Ավան-Առինջ թաղ. 1 մկշ 4/1, Սայաթ-Նովա թաղ. 6, Իսահակյան թաղ. 3/2, Դուրյան թաղ. 50, Թումանյան թաղ. 9, Թիվ 52 մանկապ., Թիվ 56 մանկապ., Քուչակ թաղ. 15, Աճառյան փ.18, Չարենց թաղ. 18, Ավան-Առինջ թաղ. 1 մկշ. 4, Ավան-Առինջ թաղ. 2 մկշ. 1/18, Նարեկացի թաղ. 44, Քուչակ թաղ. 16, Նարեկացի թաղ. 32, Նարեկացի թաղ. 31, Աճառյան փ. 34	Շինարարական աշխատանքների կատարման ավարտ
2	71351540/552		դրամ	214800	1	Ք. Երևան, Արաբկիր վ/շ, Արաբկիր 17 փողոց 27 շենք -130 քմ; Սունդուկյան փողոց 23 շենք -600 քմ; Դուման փողոց 51 շենք -420 քմ; Սունդուկյան փողոց 15/1 շենք -380 քմ; Էմինի փողոց 5 շենք - 450 քմ; Դուման փողոց 53 շենք - 420 քմ; Բաղրամյան 1-ին նրբանցք 4 շենք - 400 քմ; Գյուլբենկյան փողոց 1 շենք – 340 քմ; Մամիկոնյանց փողոց 6 շենք – 370 քմ; Մամիկոնյանց փողոց 6/1 շենք – 370 քմ; Մամիկոնյանց փողոց 6/2 շենք – 400 քմ; Շիրվանզադե փողոց 24/1 շենք – 400 քմ; Բարբյուս փողոց 63 շենք – 150 քմ; Արծրունի փողոց 92 շենք – 60 քմ; Կոմիտաս պողոտա 36գ շենք – 100 քմ; Կոմիտաս պողոտա 38/1 շենք – 380 քմ	Շինարարական աշխատանքների կատարման ավարտ
3	71351540/553	• ստուգել և վերահսկել նյութերի որակը և շինարարական աշխատանքների ընթացքը, որպեսզի ապահովվի մասնագրերին և պայմանագրային մյուս փաստաթղթերին համապատասխանությունը: Արգելել կամ փոփոխել այն նյութերը, որոնք չեն համապատասխանում անհրաժեշտ պայմաններին, • վերահսկել և գնահատել շինաշխատանքների գործընթացը, որպեսզի ապահովվի շինաշխատանքների	դրամ	406800	1	Ք. Երևան, Դավթաշեն վ/շ, **<u>Դավթաշեն 1- ին թաղամաս</u>** – 48շ. 54բն, 11շ. 18բն., 52շ. 17, 36բն., 6շ. 18բն., 45շ. 72բն., 1շ. 33, 34, 35, 36 բն., 12շ. 33, 34, 35, 36բն., 29շ. 3, 4 վերելակի տանիք, 32շ. 1 վերելակի տանիք, h 58 և 61 մանկապարտեզներ **<u>Դավթաշեն 2-րդ թաղամաս</u>** – 46շ. 18, 35, 36 բն., 34շ. 17բն., 31շ. 34բն., 59 մանկաարտեզ, 32շ. 35բն., 36շ. 33 բն. **<u>Դավթաշեն 3-րդ թաղամաս</u>** –4շ 33, 35բն., 31շ վերելակի տանիք, 60 մանկապարտեզ **<u>Դավթաշեն 4-րդ թաղամաս</u>** – 44 շ. 18բն., 8շ. 35բն, 2ա շ. 72բն., 41շ. 35բն., 1շ. 18բն., 10շ. 44, 45բն , 2շ. 33, 34, 35, 36 բն., 62 մանկապարտեզ, 20շ, 21շ., 32շ., 50շ., 53շ., 51շ., 17շ. 1, 2 ծածկ, 11շ. 1, 2, 3, 4, 5 ծածկ	Շինարարական աշխատանքների կատարման ավարտ

						53շ., 51շ., 17շ. 1, 2 ծածկ, 11շ. 1, 2, 3, 4, 5 ծածկ	
4	71351540/554	ավարտը՝ համաձայն պայմանագրի մեջ նշված ժամանակացույցի, • ստուգել բոլոր այն փորձարկումների արդյունքները, որոնք անհրաժեշտ են որակի ապահովման համար: Ստուգել բոլոր փաստաթղթերը (այդ թվում՝ բոլոր ծավալային չափերը և հաշվարկները), որոնք անհրաժեշտ են համապատասխան վճարումները իրականացնելու համար, • կատարել որակի և քանակի ամենօրյա հսկումը (համապատասխան նշում կատարելով մատյանում), այն աշխատանքների անհրաժեշտ փորձարկումները, որոնք կատարվում են կապալի պայմանագրի իրականացման շրջանակում, • շինարարության ժամանակ առաջացող խնդիրների դեպքում առաջարկել այն գործողությունները, որոնք անհրաժեշտ կլինեն աշխատանքային ժամանակացույցը պահպանելու համար, • հսկել բոլոր այն հարցերը, որոնք կապված են շինաշխատանքներն անվտանգ իրականացնելու հետ և հրահանգել Կապալառուին տեղադրել նշաններ, լուսավորության անվտանգության սարքերի և այլ համապատասխան միջոցառումների իրականացման համար, • կատարել անհրաժեշտ օրական գրառումներ, որոնք անհրաժեշտ են պայմանագրի ընթացքի վերահսկման համար (ընդգրկելով կատարված աշխատանքների հավաստագրերը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր), • կատարել աշխատանքների ծավալների չափագրումներ և մասնակցել կատարողական փաստաթղթերի կազմմանը և հաստատմանը, • շինարարության ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին ներկայացնել Հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ՝ կցելով լուսանկարները, անհրաժեշտ գծագրերը, ծածկված աշխատանքների ակտերը, փորձարկման ակտերը, սերտիֆիկատները, • Պատվիրատուի ցուցումով չափագրել կատարման ենթակա աշխատանքները: • պարտադիր ներկա լինել քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանի հավելված 1-ով նախատեսված ծածկման շինմոնտաժային աշխատանքների իրականացման ընթացքում: ***Հաշվետվության ներկայացման պահանջներ*** Կատարողը պարտավոր է ներկայացնել Պատվիրատուին ծառայությունների վերաբերյալ ***<u>ընթացիկ և ավարտական հաշվետվություններ</u>***, որոնք հանդիսանում են ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունները հիմնավորող փաստաթղթեր: ***<u>Ընթացիկ հաշվետվությունները</u>*** ներկայացվում են	դրամ	958800	1	Էրեբունի վարչական շրջան, Արցախի պող. հ 8/3 շենք -300 քմ; Արցախի պող. հ 8/2 շենք - 200 քմ; Արցախի պող. հ 20/2 շենք-140 քմ; Արցախի պող. հ 20/1 շենք-100 քմ; Արցախի պող. հ 10բ շենք-160 քմ; Արցախի պող. հ 10դ շենք-160 քմ, Արցախի պող. հ 10վ շենք-100 քմ; Արցախի պող. հ. 32ա շենք-300 քմ; Արցախի պող. հ 6բ շենք-70 քմ; Արցախի պող. հ 8 շենք-350 քմ; Արցախի պող. հ 8բ շենք-520 քմ; Աթոյան անցուղի հ.11 շենք-150քմ; Աթոյան անցուղի հ.14 շենք-200քմ; Աթոյան անցուղի հ.18 շենք-100քմ; Ազատամարտիկների փող. հ.89 -270քմ; Ազատամարտիկների փող. հ.78 -320քմ; Ազատամարտիկների փող. հ.76 -300քմ; Ազատամարտիկների փող. հ.87 ա,բ,բ1,վ շ.-400քմ; Նոր Արեշ 12-րդ փող հ.99/1շենք -150քմ; Ավանեսովի փող. հ.18 շենք - 200քմ; Ավանեսովի փող. հ.22 շենք -100քմ; Ավանեսովի փող. հ.24 շենք -100քմ; Վարդաշեն 9-րդ փող. հ.3բ շենք- 100 քմ; Վարդաշեն 9-րդ փող. հ.62 վ շենք- 100 քմ; Գուրգեն Մահարու փող. հ. 39ա շենք – 100 քմ; Գաջեգործների փող. հ. 74 ա- 300 քմ; Խաղաղ Դոնի փող. հ.31 շենք- 550քմ; Խաղաղ Դոնի փող. հ.27 շենք- 500քմ; Խաղաղ Դոնի փող. հ.23 շենք- 700քմ; Խաղաղ Դոնի փող. հ.17 շենք- 300քմ; Խաղաղ Դոնի փող. հ.10 շենք- 300քմ; Խաղաղ Դոնի փող. հ.9 շենք- 300քմ; Խաղաղ Դոնի փող. հ.8 շենք- 200քմ; Խաղաղ Դոնի փող. հ.5 շենք- 1000քմ:	Շինարարական աշխատանքների կատարման ավարտ
5	71351540/555		դրամ	532800	1	Կենտրոն վարչական շրջան, Այգեստան 9/69, Քաջազնունու 5, Քաջազնունու 6, Քաջազնունու 9, Քաջազնունու 11, Ե.Քոչար 5 (պարապետ), Ե.Քոչար 7, Ե.Քոչար 9, Ե.Քոչար 15 Վարդանանց 28/2, Սարյան 4, Սարյան 21, Մաշտոցի 15, Պուշկինի 43, Ամիրյան 15, կողքացի 1, Դեմիրճյան 29, Բաղրամյան է-ին փակուղի 14, Վրացյան 71, Վրացյան 71/2 (պարապետ),Վրացյան 84/1 (պարապետ)	Շինարարական աշխատանքների կատարման ավարտ
6	71351540/556		դրամ	532800	1	Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան, Անդրանիկի փող. 42, Անդրանիկի փող. 28,Սվաճյան փող. 60, Սվաճյան փող. 58, Անդրանիկի փող. 32, Օհանովի փող. 80, Շերամի փող. 7, Շերամի փող. 9, Անդրանիկի փող. 35, Անդրանիկի փող. 61, Շերամի փող. 69, Շերամի փող.61,Օհանովի փող.2, Օհանովի 16, Շերամի փող.81, Շերամի փող. 51, Բաբաջանյան փող. 6, Բաբաջանյան փող. 10, Բաբաջանյան փող. 30, Սվաճյան փող. 24, Անդրանիկի փող.63, Անդրանիկի փող. 69, Կուրղինյան փող. 21, Կուրղինյան փող. 21/1, Շրջանային փող. 2/6, Միքայելյան 74, Միքայելյան փող. 3, Մանուկյան փող. 4, Անդրանիկի փող. 85, Սեբաստիա փող. 141/2, Սեբաստիա 86, Սեբաստիա փող. 10, Ծերենցի 5,Անդրանիկի փող. 141, Բ-2 թաղ. 120, Բ-2 թաղ. 24 , Բաբաջանյան փող. 89,Բ-2 թաղ. 119, Անդրանիկի փող. 145, Անդրանիկի փող. 123,Ճառագայթային "Բ", Բաբաջանյան փող. 27/1, Բաբաջանյան փող.29/1, Ռաֆֆու փող. 101, Ռաֆֆու փող. 77, Բաբաջանյան փող. 1/2, Անդրանիկի փող. 158, Բաբաջանյան փող. 73, Բաբաջանյան փող. 75, Բաբաջանյան փող. 53, Անդրանիկի փող. 58, Անդրանիկի փող. 68, Անդրանիկի փող. 72, Անդրանիկի փող. 102, Ռաֆֆու փող. 39, Անդրանիկի փող. 108, Անդրանիկի փող. 144 ,Անդրանիկի	Շինարարական աշխատանքների կատարման ավարտ

		պարբերաբար, ընդգրկելով իրականացված ծառայությունները և կատարված աշխատանքները հավաստող ու հիմնավորող տեխնիկական փաստաթղթերի պատճենները (համառոտ նկարագրություն տվյալ ժամանակահատվածում իրականացված շինարարական աշխատանքների և տեխ.հսկողության ծառայությունների վերաբերյալ, լաբորատոր փորձարկումների արդյունքներ, նյութերի, կոնստրուկցիաների որակի համապատասխանության հավաստագրեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների ընդունման ակտեր, նախքան շինարարության սկիզբը, ինչպես նաև ծածկված (միջանկյալ) աշխատանքների լուսանկարներ:				փող. 115, Անդրանիկի փող.156, Անդրանիկի փող. 152, Անդրանիկի փող. 130, Բաբաջանյան փող. 43, Մանուկյան փող. 8, Անդրանիկի փող. 92, Բաբաջանյան փող.149,Բաբաջանյան փող.117, Բաբաջանյան փող. 141,Բաբաջանյան փող. 143, , Իսակովի պող. 26, Իսակովի պող. 36, Իսակովի պող. 36/3, Իսակովի պող. 42/4, Իսակովի պող. 46, Բաբաջանյան փող. 157, Իսակովի պող. 50/3, Իսակովի պող. 50/4 բազմաբնակարան շենքերի հարթ տանիքներ	
7	71351540/557	***Ավարտական հաշվետվությունը*** պետք է ընդգրկի հետևյալ փաստաթղթերի պատճենները՝ ավարտական կատարողական փաստաթղթեր, ամփոփ նկարագրական տեղեկանք իրականացված շինարարական աշխատանքների ամբողջ ժամանակահատվածի համար, նախքան շինարարության սկիզբը, ինչպես նաև ավարտված շինարարական օբյեկտի լուսանկարներ: ***Ընթացիկ հաշվետվությունները*** նաև ներկայացվում են շինարարական աշխատանքների յուրաքանչյուր կատարողական արձանագրությունը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունների հետ մեկտեղ: ***Ավարտական հաշվետվությունը*** ներկայացվում է շինարարական աշխատանքների ավարտական կատարողական արձանագրությունը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում:	դրամ	958800	1	Նոր Նորք վարչական շրջան, Գայի 4$_2$., Գայի 8$_2$, Լվովյան 19$_2$., Նանսենի 3$_2$., Լվովյան 25$_2$., Լվովյան 13$_2$., Նանսենի 19$_2$., Մոլդովական 25/2$_2$., Մոլդովական 43/1$_2$., Մոլդովական 40$_2$.,Ն. Ստեփանյան 12$_2$, Ն. Ստեփանյան18$_2$., Թոթովենցի 2$_2$., Գյուրջյան 5$_2$., Գայի 26$_2$., Գայի 20$_2$., Գայի 22$_2$., Բակունցի 2$_2$., Բակունցի 10$_2$., Բակունցի 11$_2$., Բակունցի 13$_2$., Հովհաննիսյան 8/1, Հովհաննիսյան 10, Հովհաննիսյան 16, Հովհաննիսյան 18, Գյուլիքևխյան 13$_2$., Գյուլիքևխյան 15$_2$., Գյուլիքևխյան 29., Գյուլիքևխյան 25/2$_2$., Գյուլիքևխյան նրբ. 1$_2$., Գյուլիքևխյան նրբ. 3$_2$., Գալշոյան 2$_2$., Մառի 7$_2$., Բ. Մուրադյան 5$_2$., Շոպրոնի 12 2., Ավետիսյան 9$_2$., Կարախանյան 19$_2$., Ավետիսյան 8$_2$., Ավետիսյան 14$_2$., Ավետիսյան 29$_2$., 8-րդ զանգ. 22$_2$, 8-րդ զանգ., 37$_2$., 8-րդ զանգ., 38$_2$., 8-րդ զանգ., 6$_2$., 8-րդ զանգ., շրջ. 2$_2$., Վիլնյուսի 99$_2$., Վիլնյուսի 41$_2$., Վիլնյուսի 59$_2$., Վիլնյուսի 37$_2$., Վիլնյուսի 85$_2$., Վիլնյուսի 103$_2$., Վիլնյուսի 107., Վիլնյուսի 109$_2$., Վիլնյուսի 113$_2$., Վիլնյուսի 65$_2$., Վիլնյուսի 45$_2$., Վիլնյուսի 57$_2$., Բանավան 11$_2$., Բանավան 16$_2$., Մայակ 36$_2$., Նանսենի 20$_2$., Բակունցի 1-ին նրբ. 5$_2$., Բակունցի 1-ին նրբ. 3$_2$., Բակունցի 1-ին նրբ. 4$_2$., 8-րդ զանգ. 28$_2$., Վիլնյուսի 83$_2$., Վիլնյուսի 61$_2$., Դ. Բեկի 29$_2$., Ավետիսյան 6$_2$, Ավետիսյան 32$_2$, Նանսենի 6$_2$	Շինարարական աշխատանքների կատարման ավարտ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02598108

Է. Կիրակոսյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Իրտիգ» ՍՊԸ
ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Թումանյան 11/26
«Ինեկոբանկ» ՓԲԸ, Վանաձոր մ/6
Հ/Հ 205142207229-1001
ՀՎՀՀ 06954405

Տ. Պողոսյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 2
04 օգոստոսի 2020թ.կնքված N ԵՔ-ԳՀԽԾՁԲ-20/4
ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության																	
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Բանկը և հաշվեհամարը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*													
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը	
1	71351540/551	Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ	Կենտրոնական գանձապետարան Հ/Հ 900032479140								435000	435000	435000	435000	435000	435000	
2	71351540/552	Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ	Կենտրոնական գանձապետարան Հ/Հ 900032313158								214800	214800	214800	214800	214800	214800	
3	71351540/553	Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ	Կենտրոնական գանձապետարան Հ/Հ 900052476323								392176	392176	406800	406800	406800	406800	
4	71351540/554	Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ	Կենտրոնական գանձապետարան Հ/Հ 900022600630								720000	720000	958800	958800	958800	958800	
5	71351540/555	Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ	Կենտրոնական գանձապետարան Հ/Հ 900012213915								448241	448241	532800	532800	532800	532800	

6	71351540/556	Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ	Կենտրոնական գանձապետարան Հ/Հ 900052470490								532800	532800	532800	532800	532800	532800
7	71351540/557	Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ	Կենտրոնական գանձապետարան Հ/Հ 900032098502								940960	940960	958800	958800	958800	958800
Ընդամենը																**4039800**

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան _____
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Իրտիգ» ՍՊԸ
ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Թումանյան 11/26
«Ինեկոբանկ» ՓԲԸ, Վանաձոր մ/ճ
Հ/Հ 205142207229-1001
ՀՎՀՀ 06954405

Տ. Պողոսյան _____
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

INECOBANK

03.08.2020թ. N C-12219

ԵՐԱՇԽԻՔ N EA20/00418
(որակավորման ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից <<ԵՔ-ԳՀԽԾՁԲ-20/41>> ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում <<ԻՐՏԻԳ>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքվելիք N <<ԵՔ-ԳՀԽԾՁԲ-20/41>> պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով <<ԻՆԵԿՈԲԱՆԿ>> ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված գրավոր պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 4,852,829.00 (չորս միլիոն ութ հարյուր հիսուներկու հազար ութ հարյուր քսանինը) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Երաշխիքն անհետկանչելի է:

4. Երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև N <<ԵՔ-ԳՀԽԾՁԲ-20/41>> ծածկագրով կնքվելիք պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 29.09.2020թ. ներառյալ:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով:

Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N <<ԵՔ-ԳՀԽԾՁԲ-20/41>> ծածկագրով կնքվելիք պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը.

3) սույն երաշխիքի պատճենը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

<<ԻՆԵԿՈԲԱՆԿ>> ՓԲԸ <<ՎԱՆԱՁՈՐ>> մասնաճյուղ

Կառավարիչ ..... Վահրամ Հակոբջանյան

Կատարող Աշոտ Եղոյան
Ստորաբաժանում՝ ՎՀԲ
Հեռ. (010) 510-510 (5680)

ԻՆԵԿՈԲԱՆԿ

14 APR 2020 № 71

ԼԻԱԶՈՐԱԳԻՐ

քաղաք Երևան **տասնչորսը ապրիլի երկու հազար քսան թվականի**

«ԻՆԵԿՈԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ նաև՝ Բանկ), ի դեմս գործադիր տնօրեն **Արեն Նալթակյանի,** ով գործում է Բանկի կանոնադրության հիման վրա, լիազորում է Բանկի «Վանաձոր» մասնաճյուղի կառավարիչ **ՎԱՀՐԱՄ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆԻՆ** (անձնագիր՝ AN0437852, տրված՝ 11.04.2013թ.-ին 018-ի կողմից),

հանդես գալու Բանկի անունից և Բանկի ներքին իրավական ակտերով և փաստաթղթերով սահմանված կարգով և չափերով կնքել քաղաքացիաիրավական գործարքներ, որոնք անհրաժեշտ են Բանկի «Վանաձոր» մասնաճյուղի կանոնադրությունով նախատեսված ֆինանսական գործառնությունների իրականացման համար:

1. հանդես գալու Բանկի անունից ՀՀ ոստիկանության Ճանապարհային ոստիկանության ծառայությունում և իրականացնելու տրանսպորտային միջոցի գրավի (ներառյալ՝ հաջորդող գրավի, առուվաճառքի և գրավի/հաջորդող գրավի) պայմանագրերից ծագող Բանկի գրավի իրավունքի գրանցման հետ կապված բոլոր անհրաժեշտ գործողությունները, այդ թվում՝ ներկայացնելու դիմումներ, ստանալու գրավի իրավունքի գրանցման վկայականներ, ստորագրելու սույն լիազորության հետ կապված ցանկացած փաստաթուղթ:

Սույն լիազորագրով նախատեսված լիազորությունները տրված են առանց վերալիազորման իրավունքի:

Սույն լիազորագիրն ուժի մեջ է մտնում 2020 թվականի ապրիլի 25-ից և գործում է մինչև 2023թ. ապրիլի 25-ը՝ ներառյալ: Վահրամ Հակոբջանյանին՝ զբաղեցրած պաշտոնից ազատվելու դեպքում սույն լիազորագիրը դադարում է վերջինիս պաշտոնից ազատման օրը:

ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ **ԱՐԵՆ ՆԱԼԹԱԿՅԱՆ**

ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ, 0001, ք. Երևան, Թումանյան փ. 17, Հեռ.՝ +(374 10) 510 510
Ֆաքս՝+(37410) 510 573, էլ. փոստ՝ inecobank@inecobank.am, www.inecobank.am

Հավելված 5.1
N «ԵՔ-ԳՀԽԾՁԲ-20/41» *ծածկագրով*
բաց մրցույթի հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Վանաձոր

«03» 08 2020թ.**

<<Իրտիգ>> ՍՊԸ -ն, ի դեմս Ընկերության տնօրեն՝ **Տիգրան Պողոսյան**-ի (Անձն. AS0366860, տրվ.12.09.2018թ., (033) -ի կողմից), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված ***N «ԵՔ-ԳՀԽԾՁԲ-20/41»*** ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.5 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.6 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.7 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.8 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.9 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

<<Իրտիգ>> ՍՊԸ
ք. Վանաձոր, Թումանյան 11/26
Ինեկոբանկ ՓԲԸ , Վանաձորի մ/ճ
Հ/Հ 205142207229-1001
ՀՎՀՀ 06954405

Տնօրեն՝ **Տ. Պողոսյան**

Կ.Տ.

/ / 2020թ.

* *լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը*

1.

ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ*

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն՝ **<<Իրտիգ>> ՍՊԸ**)

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **Ինեկոբանկ ՓԲԸ, Վանաձորի մ/ճ**

6. Վճարողի հաշվի համարը՝ **205142207229-1001**

7. Վճարողի ՀՎՀՀ՝ **06954405**

8. Վճարողի ՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ **Երևանի քաղաքապետարան**

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ **02593108**

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **Կենտրոնական գանձապետարան**

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N)՝ **900015211429**

14.Գումարը (թվերով և բառերով)՝ **403 980 (չորս հարյուր երեք հազար ինը հարյուր ութսուն) <<** դրամ

15.Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ **<<** դրամ /AMD/

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(որակավորման ապահովման համար)*

18.Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.S.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 21.բ. Կ.S.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/
24.բ. Կ.S. 24.գ "___" ___ 20___ թ.	23.բ. Կ.S. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

** Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*